



ԱՄՍԱՐԵՐԹ
AVEDARANI TSAIN

An Armenian Religious Monthly

Propr. Rev. K. T. SARIAN

Արտոնաւեր՝ Խ. Թ. ՍԱՐԵԱՆ


Խմբագիրներ՝ Խ. Թ. ՍԱՐԵԱՆ և Կ. ԹՈՒՄԱՆԱՆ

Ոչ - յարանուանական և անկախ կրօնական պարբերաբեր

Ա. ՏԱՐԻ

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1939

ԹԻԻ 10



Տոբ. Ա. Բ. ԹՕԻԻ (սեւ առաջին յղուածը)

ԿԱՐԵԻՈՐ ԿԷՏԵՐ ԹԵՐԹԻՍ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ

1. Մեր նշանաբանը.— Էական կետեռու մեջ միութիւն, ոչ էական կետեռու մեջ ազատութիւն, իսկ ամեն բանի մեջ սէր:— *Օգոստինոս*:

2. Նպատակը.— Ծառայել Քրիստոսի սրբազան դասին: Պայքարիլ մոլորութեանց դէմ: Տարածել Աւետարանի նշանաբանները, Քրիստոսի ձրի փրկութիւնը քաղաքացիներէն: Մեզի ապագայութեան եւ վերսին ծնունդի անհրաժեշտութիւնը՝ Աստուծոյ Թագաւորութիւնը մտնելու: Մղել փրկուածները սրբազործում կեանքի եւ այսպէս պատրաստել զանոնք Քրիստոսի փառաւոր վերադարձին:

3. Դաւանանքը.— Կը հաւատայ (1) Սբ. Դրոց Աստուծոյ նշանները, անսխալական եւ հաւատքի ու կեանքի կանոնը ըլլալուն: (2) Ամենասուրբ Երրորդութեան: (3) Քրիստոսի Աստուածութեան: (4) Սբ. Հոգւոյն անձնաւորութեան: (5) Վերսին Ծնունդի: (6) Սրբազործութեան եւ Սբ. Հոգիով մկրտուած կեանքի: (7) Մեր Տէրոջ կրկին, անձամբ վերադարձին: (8) Մեղեցեալներու յարութեան: (9) Ընդհանուր դաստանի: (10) Սրբոց՝ Քրիստոսի հետ քաղաւորութեան: (11) Երկինքի եւ դժոխքի: (12) Սասնային անձնաւորութեան, բարի եւ չար հրեշտակներու գոյութեան: (13) Արդարեւեւում համար յաւիտեան կեանքի, իսկ մեղաւորներուն համար՝ յաւիտեան կեանքի սանջանքի: (14) Եկեղեցւոյ միասնականութեան եւ անոր վերջնական յաղթանակին:

4. Կը հրատարակուի իբր ոչ-յարանուանական անկախ կրօնական ամսաթերթ, հայերէն եւ հայաստա քրեւերէն լեզուներով:

5. Աշխարհիկ ծանուցումներ չեն ընդունուիր:

6. Զօդուածներ կ'ընդունուին անոնցմէ, որոնք հոգեւոր կեանքի անձնական փորձառութիւնը եւ զուրսէն եղողներէն ալ բարի վկայութիւն ունին, կը յարգեն քերթին ուղղութիւնը եւ զրկուած յօդուածները կը ծառայեն հետապնդուած նպատակին:

7. Թերթիս սիւնակները տրամադրելի չեն վիճաբանական նիւթերու համար եթէ անոնք պարզապէս վիճեր յարուցանելու կը ծառայեն եւ ոչ թէ լուսաբանութիւններու:

8. Չհրատարակուած յօդուածներ չեն վերադարձուիր:

9. Վեց ամիսէն նուազ պայմանաժամով բաժանորդագրութիւնը չընդունուիր:

10. Եղած հարցումներուն պատասխանելու կամ չպատասխանելու իրաւունքը կը վերապահուի այդ սիւնակը վարողին:

ԽՄԲԱԴԻՐՆԵՐ


ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Բոյր մը 20 Ե, Դ. կը նուիրէ «Աւետ. Զայն»ի ֆօնդին

Ուշադրութիւն.— Բոյր դրամական առաջումներ, յօդուածներ եւ քղապագայութիւն պէտք է հասցեագրուին հետեւեալ կերպով:—

K. T. SARIAN

2, Rue Ahmed Pacha Hasanen,
Shoubra, Cairo (Egypt).



ԱՄՍԱԹԵՐԹ
AVEDARANI TSAIN

An Armenian Religious Monthly

Propr. Rev. K. T. SARIAN

Արտոնաւոր՝ Խ. Թ. ՍԱՐԵԱՆ

Խմբագիրներ՝ Խ. Թ. ՍԱՐԵԱՆ և Կ. Թ. ՌԻՄՈՆԵԱՆ

Ոչ - յարանուանական և անկուխ կրօնական պարբերաբր

Ա. ՏԱՐԻ

ՀԱՅԵՍՏԱՆԻ 1939

ԹԻԻ 10

Սր. Հոգին Ի՞նչ Կ'ընէ

Գրեց՝ Տօք. ԹՕՐԻ

Մերոյ, Հոգւով Սրբով մկրտութիւնը միշտ քալած է վկայութեան և ծառայութեան հետ, և առաջին նշանակողը անկէ՝ վկայութիւն և ծառայութիւն է։ Բարեկամներ, Հոգւոյն մը կըրտութիւնը մեզ երջանիկ ընել և սրբացնել չէ լոկ։ Ո՛հ, եթէ Սր. Հոգիով պիտի մկրտուիս պիտի ունենաս ճշմարիտ և ամենախորին ուրախութիւնը, յետոյ կատարեալ սրբութիւն, որովհետեւ առանց Անոր մեզ սրբացնելուն՝ մենք երբեք չենք կրնար սրբանալ։ Սակայն Սր. Հոգիով մկրտուելէ բուն նպատակը ըստած է մեզի՝ համար ճիշտ մէջ։ «Հոգւոյն Սրբոյ ձեր վրայ եկած ատենը զօրութիւն պիտի առնէք ու ինծի համար վկաներ պիտի ըլլաք...»։ Ասիկա ձեզ օտարութիւն համար է՝ որպէս վկաներ, և ձեզմէ շատերուն համար դժուարութիւնը սա՛ է, ձեզմէ իւրաքանչիւր հոգի կը փնտռէ անձնական օրհնութիւն, փոխանակ խնդրելու յարմար

ութիւն Աստուծոյ գործին համար։ Ո՛հ, ա՛յնքան շատեր մեծ համազօրութիւն կ'երթան և կ'ստանան «օրհնութիւնը» ինչպէս իրենք կը կոչեն, և վերադառնալով կը խօսին իրենց օրհնութեան մասին որը օրհնութիւն մը չէ ո՛չ իրենց պաշտօնեաներուն, ո՛չ եկեղեցւոյն և ոչ ալ կորսւած մեղաւորներուն համար։ Հոգւով Սրբով մկրտութիւնը կը նշանակէ սէր՝ հոգիներու համար, և զօրութիւն՝ հոգիները Բրիտանիա առաջնորդելու։

Ի՞նչ է արդիւնքը Հոգւով Սրբով
Մկրտութեան

— Անոնք բազմաթիւ են, սակայն ամենուն վրայ պիտի չծանրանամ։ Նոր ուրախութիւն մը, Բրիտանիա մասին նոր գիտութիւն մը, նոր օրհնութիւն մը, սակայն ամէնը մէկ բառով ըստած է Գործք. 1:8ին մէջ ինչպէս վերը յիշեցինք։ Զօրութիւն՝ գործե-

լու Աստուծոյ համար: Արդ, այդ զօրութիւնը պիտի գոյ տարբեր կերպով, տարբեր անհատներու համար, որովհետեւ մենք կանչուած ենք տարբեր տարբեր ծառայութիւններու: 1 Կոր. 12:4-14 և 29ին մէջ առաքեալը կ'ըսէ որ՝ «Պարգեւները զանազան են, սակայն նոյն Հոգին է, նոյնպէս պաշտօնները զանազան են բայց նոյն Տէրն է, նոյնպէս ներգործութիւնը զանազան են, բայց նոյն Հոգին է... եւն.»։ Կ'ուզեմ ծանոթանալ ասոր վրայ, պիտի ըսեմ՝ թէ ինչո՞ւ: Որովհետեւ հոս է՝ որ շատեր սխալի մէջ կ'իյնան: Երբ ես սկսայ ուսումնասիրել սոյն նիւթը, գտայ որ շատեր, որոնք Հոգւով Սրբով մկրտուեցան Նոր Ուխտին տանը, լեզուներու պարգեւը ստացան: Եթէ այսօր ալ մէկը Սբ. Հոգիով մկրտուի, պէտք չէ՞ որ ստանայ լեզուներու պարգեւը: Սակայն չի տեսայ մէկը որ ստացած ըլլայ զայն, և ես զարմացմամբ հարցուցի թէ որդեօք խոստմունքը ներկայիս համար դադրե՞ր է: Օր մը կարդացի 1 Կոր. 12:13ը ուր Պօղոս զարմանալի խօսք մը ունի, «Միթէ ամէնը լեզունե՞ր կը խօսին»: Ես իմ սխալ տեսայ: Յետոյ փորձուեցայ երկրորդ սխալի մը մէջ իյնալու: Խորհեցայ որ եթէ մէկը Հոգւով Սրբով մկրտուի աւետարանչի մը պարգեւը պիտի ունենայ: Ես կարդացի Մուտիյի, Չարլզ Ֆիննիյի, Ճանըթըն էտվըրտզի և Ճօն Ուէսլէյի մասին որոնք երբ Սբ. Հոգիով լեցուեցան, ի՞նչ հրաշալի զօրութեան տիրացան որպէս աւետարանիչներ, և ես փորձուեցայ խորհիլ թէ՛ եթէ մէկը Հոգւով Սրբով մկրտուի անոնցմէ մէկուն պէս պիտի ըլլայ: Ասիկա միւսին պէս Սբ. Գրային է, որովհետեւ եթէ Աստուած կանչեր է քեզ իբր աւետարանիչ և մկրտուած ես Սբ. Հոգիով, զօրութիւն պիտի ստանաս իբր աւետարանիչ, սակայն

եթէ Տէրը կանչեր է քեզ ըլլալու ուրիշ բան, պիտի ստանաս զօրութիւն ըլլալու ուրիշ բան մը, որուն համար Աստուած կանչեր է քեզ, և ինչպէս որ մեզի ըսուած է 11րդ համարին մէջ «Հոգին... ամէն մէկուն զատ զատ կը բաժնէ՝ ինչպէս կ'ուզէ»:

Այլ խօսքով, քու և իմ գործս չէ գործունէութեան ասպարէզը ընտրել և տկնակալի Սբ. Հոգիէն որ յարմարեցնէ մեզ մեր ընտրած գործին համար, այլ մեր ընելիքը՝ մենքմեզ մար, Հոգւոյն տրամադրութեան տակ Սբ. Հոգւոյն արամադրութեան տակ զնել է, որպէսզի ինքը ընտրէ մեզի հաղորդուելիք պարգեւը: Ո՞վ Տէրոջը գործին մէջ գտնուող այրերու կիներ, խնդիրը այն չէ թէ ի՞նչ ենք մենք բնականօրէն, այլ սա՛ թէ Աստուած ի՞նչ կրնայ ընել մեզ գերբնականօրէն: Հոս ես կրնամ պատմել ձեզի ինծի ծանօթ այրերու և կիներու մասին, որոնք պայմանները լրացնելէն ետքը վայրկենական անցած են յետին անկարողութենէն, Աստուծոյ համար յոյժ օգտակարութեան փորձառութեան:

Ես անգամ մը ներկայ էի մեծ համագումարի մը, խօսելու «Անձնական գործ» նիւթին վրայ: Ի մէջ այլոց ըսի թէ, «Անձնական ուղիւ գործ մը կատարելու համար Հոգւոյն Սրբոյ որոշ մկրտութիւնը ունենալու ենք, և քանի մը խօսքով բացատրեցի ինչ ըսել ուզածս: Հազիւ թէ ժողովը լրացած էր ժողովական Եկեղեցիէն պաշտօնեայ մը, որ բեմ նստողներէն մէկն էր, ինծի մօտենալով ըսաւ. «Եղբ. Թօրի, ես չունիմ այդ ուժը որոշ մասին խօսեցաք, սակայն կ'ուզեմ ունենալ զայն»: Ծոնկի եկանք 3000 ժողովուրդին աչքերուն առջեւ — իր դիւրին բան չէր ժողովական Եկեղեցիի մը քարոզչին համար, սակայն ան բռնուն փափաք մը ունէր զԱյն ստանալու — աղօթելու մասնաւոր կեր-

պով որ Աստուած մկրտէ զինքը Սբ. Հոգիով, հոն այդ վայրկեանին:

Քանի մը շարաթ հաքը պանդոկ մը կը գտնուէի՝ մէկը եկաւ և հարցուց «Եղբ. Թորի կը յիշե՞ք այն ժողովական քարոզիչը որուն հետ աղօթեցիք, ոնկէ հաքը ան վերադարձաւ իր եկեղեցին կերպարանափոխուած: Ունի մեծ եկեղեցի մը, և այժմ ամէն Կիրակի իրիկուն իր եկեղեցին կը խոնուի, ինչ որ սակայն լուսագոյն է թէ՛ ամէն Կիրակի իրիկուն դարձի եկողներ կան»: Ով եղբայրներ, այս չէ՞ մեր ուղածն ալ, բան մը զոր կրնանք ունենալ:

Գործք. 1:4—8 համարներուն մէջ կը տեսնենք որ Յիսուս, կ'արգիլէ իր աշակերտները խօսելէ մինչեւ որ չըստանան օրհնութիւնը: Արդ, հարկ անհրաժեշտ է Սբ. Հոգիով մկրտութիւնը: Գործք. 2:39ը մեզի կը խօսի անոր կարելիութեան վրայ՝ ամէնուս համար, մեզ հեռու եղողներուս համար, որ մօտեցած ենք Քրիստոսի արիւնովը:

Անգամ մը ես ուրիշ մեծ ժողովի մը մէջ կը գտնուէի, որուն կը նախագահէր քաղաքին ամենէն յարգուած եպիսկոպոսական կղերական մը: Ես խօսեցայ այս նիւթին վրայ, Երբ տուն վերադարձանք ինծի ըսաւ, «Եղբայր Թորի այս յետ միջօրէի քարոզող զիս շատ հետաքրքրեց: Եթէ Գործք. 2:39ի վրայ ձեր մեկնութիւնը ուղիղ է՝ դուք իրաւունք ունիք, սակայն կը կասկածիմ այդ մասին»: Վերջը նիւթը ուսումնասիրեցինք միասին: Քանի մը տարի հաքը, Կիրակի կէսօրէ մը վերջը յանկարծ իրարու հանդիպեցանք, ձեռքս բռնելով ըսաւ, «Եղբայր Թորի, կ'ուզեմ ըսել ձեզի թէ՛ Գործք. 2:39ի վրայ ձեր մեկնութիւնը ուղիղ է, և Կորնթեմ իրաւունք ունիմ ըսելու՝ թէ այժմ ես ալ մկրտուած եմ Սբ. Հոգիով»: Կը գոհանամ Աստուծոյ որ ես

ուղիղ էի, անիկա այնպիսի փառաւոր ճշմարտութիւն մըն է՝ որ կրնաս շերջել աշխարհի ամէն կողմ և հազարաւոր մարդոց երեսին շնչտակի նայելով, և քու ստաքերուդ՝ Աստուծոյ հաստատուն խօսքերը կռուան ունենալով, յայտարարել թէ Սբ. Հոգւոյն մկրտութիւնը իրենցմէ ամէն մէկուն համար է:

Սակայն բարեկամներ, այս ճշմարտութիւնը իՐ ՀԱՆԴԻՍՍԻՈՐ ԿՈՂՄԸ ՈՒՆԻ, Եթէ դուն և ես Սբ. Հոգիով կրնանք մկրտուիլ՝ պէտք է մկրտուինք, որովհետեւ միայն այդ կերպով հոգիներ Քրիստոսի կ'առաջնորդուին, եթէ ոչ պիտի չառաջնորդուին: Այլապէս մենք պատասխանատու ենք Աստուծոյ առջեւ այն հոգիներուն համար, որոնք պիտի կրնային փրկուիլ և չփրկուեցան, որովհետեւ չուզեցինք վճարել զինքն այդ մեծ օրհնութիւնը ստանալու:

Խօսք մը եւս վերջացնելէ առաջ: Ես յաճախ կը դողամ ինծի և այս պաշտօնին մէջ գտնուող բարեկամներուս համար: Պաշտօն բուռը կը պարփակէ իր մէջ բոլոր քրիստոնեայ գործիչները: Խնչու. որովհետեւ մոլորութիւն կը քարոզենք: Ոչ, այլ անոր համար որ մենք կը քարոզենք Աւետարանը ոչ թէ «Հոգւոյն ապացուցութիւնովը, այլ մարդկային իմաստութեան համոզիչ խօսքերովը»: Երկրի վրայ ամենէն մահացուցիչ բանը առանց Սբ. Հոգւոյն զօրութեան աւետարանչութիւնն է: Եղբայրներ և քոյրեր, ամենքս պէտք է Հոգւով Սրբով մկրտուինք, ի գին ամէն բանի: Պէտք է, պէտք է ունենանք Սբ. Հոգւոյն Մկրտութիւնը: Երանի թէ ամենուս վրայ գար:

Վ Ե Ր Ջ

ԻՆՉ ՊԵՏԲ Է ԸԼԼԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴ՝ ՔՐԻՍՏՈՆԵԱՅԻ ՍԸ ԲԱՂԶԱՆՔԸ

Արդի երիտասարդութիւնը անձկանօք կը բաղձայ բան մը ըլլալ և բան մը ընել, և այդ ուղղութեամբ ալ կը լարէ իր ճիգերը և փորձեր կը կատարէ: Անոնք կը դիմեն երբեմն աննպատակ արկածախնդրութեանց, այդ պատճառով ալ երիտասարդական կեանքը լի է այսօրինակ յանդուգն ձեռնարկներով: Կեանքը պայքար մըն է, պէտք է զինուիլ այս պայքարին մէջ յաջող հանդիսանալու՝ ներկայացած փորձութեանց և դժուարութեանց առջեւ:

Քրիստոնեայ երիտասարդ մը բացառութիւն չի կազմեր, ընդհակառակը, ան աւելի հզօր թշնամիներով շրջապատուած է, «Մեր պատերազմը, կ'ըսէ առաքեալը, մարմինի և արիւնի հետ չէ, հոպա... խաւար աշխարհի իշխաններուն հետ, երկինքի չար ոգիներուն հետ»: Քրիստոնեայ երիտասարդ մը պէտք եղածին պէս սպառազինուած է այս պատերազմին համար: Եւ ի՞նչպէս կրնայ ունենալ պէտք եղած զէնքը — Եփես. 6, 11-18 համարներուն մէջ կը գտնուի այդ զինարանը, պէտք է այցելութիւն մը տալ այդ տեղ, և միայն մէկ այցելութիւնով ալ գոհանալ պէտք չէ: Թըշնամիին դէմ գրոհ տալէ առաջ պէտք է հոն մտնել աղօթքով և հաւատքով, սպառազինուիլ և զէնքերը նորոգել պէտք է:

Ծանօթ. Խմբգ. Սոյն յօդուածը, որ կերպով մը կոչ մըն է քրիստոնեայ երիտասարդներուն, գրուած է դեռաքի եւ ուշիմ երիտասարդի մը կողմէ, որ ինքզինքը նուիրած է Տէրօջը գործին: Փափաքեի եր որ այժմու հաճոյապատէ երիտասարդութիւնը արթննար այս կոչէն եւ ոմանք բնդգրկեին սրբազնագոյն ասպարեկը:

Գօլոմպոս յանդուգն ձեռնարկի մը մէջ գտնուեցաւ, նոր աշխարհ մը գտնելու, մեր ձեռնարկը աւելի կտրեւոր նպատակ մը կը հետապնդէ, հաւատք ունենալով առ Աստուած երթալ պատմել Աստուծոյ սէրը անկեալ մարդկութիւնը փրկելու իղձով: Այսպէս չափի հոգիներ, որոնց իւրաքանչիւրը աւելի արժէք ունի քան համայն աշխարհը:

Ո՛վ քրիստոնեայ երիտասարդ, անգամ մը չե՞ս վերցնել աշքերդ նախելու համար ճերմկած արտերուն, թէ հոնձքը պատրաստ է, թէ քու արող դեռ պատրաստ չէ, պատճառը այն է որ ցանած չես: Ինչո՞ւ կը տնտնաս, ցանէ սերմը:

Մեզմէ ոմանք կ'երեւի գիտակից չեն այս բարձր կոչումին, չեն ստացած Տէրօջը հրուէրը: Ահաւասիկ այդ հրաւէրը. — «Գացէ՛ք բոլոր ազգերը աշակերտեցէ՛ք» Մենք կը սիրենք Տէրօջը սա խօսքը, «Ահա ամէն օր ես ձեզի հետ եմ մինչեւ աշխարհիս վերջը» ու զանց կ'ընենք նախնիքի համարը որ մեր հոգեւոյն վառելանիւթն է ինչպէս նաւթը ինքնաշարժին:

Ոմանք կը կարծեն թէ Տէրօջը այգիին մէջ գործել տարիքի և ֆիզիքական յարմարութեան խնդիր է: Ասոնք իրենց առաւելութիւնները ունին, սակայն էական պայմանը Տէրօջը կոչումն է:

Եթէ անցեալի վրայ ակնարկ մը նետենք պիտի տեսնենք թէ Քրիստոսի եկեղեցւոյն մէջ անոր յառաջխաղացումին մեծապէս նպաստած են երիտասարդներ եւս: Երեմիան դեռ մանուկ էր երբ կանչուեցաւ այդ փափուկ գործին, նոյնպէս Տիմոթէոս՝ նոր Ուխտին մէջ:

Ճօն Ուէսլէյ դեռ ուսանող էր Օգոստոս

Ֆորտ երբ կողմակերպեց քրիստոնեայ ընկերակցութիւն մը:

Մարգին Լուդեր 27 տարեկան էր երբ Սանդա Սգալան կ'ելլէր և կ'արթըննար հաւատքով փրկութեան վրայ:

Ճօն Կալվին 20 տարեկան էր երբ սկսու հռչակել երկնային պատգամը:

Ճօրճ Ուհայթֆիլտ 20 տարեկան էր երբ սկսած էր մեծ շարժումին:

Ճէրէմի Թէյլըր 18 տարեկան էր երբ Ս. Պօղոս Մայր եկեղեցւոյն մէջ կը հմայէր ժողովուրդը Աւետարանով:

Ո՛վ քրիստոնեայ երիտասարդ ի՞նչ է քու կեանքիդ նպատակը:

Մեր Տէրը կ'ըսէ, «Գոցէք... և աշակերտեցէք»:

ԱԼՊԵՐԹ Յ. ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

ԶԳՈՒՇԱՑԷՔ ԹԵԹԵԻ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ

Մահամերձ մարդուն մէկը իր հոգեւոր պաշտօնեան կանչելով իր սնաբին քովը կը պատմէ հետեւեալը.—

Ասկէ քսան տարի առաջ, աղօթքի մեծ օր մ'եր, դուն քարոզեցիր և ինծի ա՛յնքան ազդեց խօսքը որ ան մտաւ մինչեւ ոսկորներս ու ծոծաւ, և ես մեծ փափաք կ'զգայի սիրտս Աստուծոյ տալու և վկայելու զայն քու առջեւդ: Այդ պատճառաւ եկեղեցւոյն դրան առջեւ դուրսը սպասեցի քեզի, երբ դուն բարեկամի մը հետ դուրս կ'ելլէիր, ըսի թէ քեզի հետ խօսիլ կ'ուզեմ, ե՛րբ կրնաք ինծի ժամանակ տալ: Դուք պատասխանեցիք ու ըսիք ինծի թէ մի քիչ սպասեմ, յետոյ հետս խօսելու ժամանակ պիտի ունենաք:

Եւ ես սպասեցի ձեր քովէն քալելով, երբ կը քալէի լսեցի որ ձեր բարեկամին հետ քու եկեղեցւոյդ անդամներուն մասին շատ ազեղօրէն կ'արտայայտուէիք և այդ բանը պաղեցուց իմ փափաքս: Երբ հասանք ձեր տան դուռը՝ ըսի, «Նիւթը որուն վրայ կ'ուզէի ձեզի հետ խօսիլ կրկին նկատի առի և այժմ պէտք չեմ զգար

ձեզի հետ խօսելու»:

«Անկէ ի վեր ես մեղաւորից կեանքի մը մէջ ինկած եմ, և այսօր կը մեռնիմ առանց Աստուծոյ և առանց կենդանի յոյս մը ունենալու: Ես քեզ հոս կանչեցի որ նզովեմ քեզ, Դուն ինքզինքդ այն տան իմ ապաշխարութեանս առջեւ դրիր իբր խոչ և արգելիցիր զիս դարձի գալէն, և այդ պատճառաւ քեզ Աստուծոյ դատաստանի ոթողին առջեւ պիտի ամբաստանեմ: Ասիկա ըսելէն ետքը մահամերձ մարդը ցոյց կուտայ քարոզիչին տուն դուռը առանց ժամանակ տալու իրեն խօսելու, հետեւաբար ան ստիպուած՝ գլխիկոր կը ձգէ տունը:

«Ասիկա ցնցող դէպք մըն է», պիտի ըսէ ընթերցողը, և այդպէս է անտարակոյս: Սակայն, որդեօք միեւնոյն բանը չի՞ կրկնուի որ ուրիշ տեղեր որոնց գէշ արդիւնքը այնքան յայտնի չըլլար, ինչպէս այս պարագային: Այսպէս ահաւոր կրնայ ըլլալ արդիւնքը թեթեւ խօսակցութիւններուն:

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆԸ

Մարդուն համար Աստուծոյ յայտնած ամենաթանկագին գանձն է Աստուծոյ շունչը: Այսոս որ շատեր այս մասին անտեղակ կ'ապրին: Ոմանք չեն կարգար զայն, ոմանք ալ կը կարգան սակայն չեն սիրեր: Ոմանք գոնճը չեն տեսներ, ոմանք ալ կը տեսնեն սակայն չեն օգտագործեր զայն: Առաջին դասակարգին պատկանողները կոյր են, իսկ երկրորդ դասակարգին պատկանողները հոգիով աղքատ կը մնան:

Անոնք, որոնք կը փափաքին Աստուծոյ շունչին ճոխ և լեցուն օրհնութիւններէն օգտուիլ, անոնց կը յանձնարարենք հետեւեալ թելադրութիւնները:—

Ա. Աստուածաշունչը կանոնաւոր կարգա՝

Կարգա՝ զայն ամէն օր: Նոյնիսկ կարգա՝ ամենազբաղեալ օրերուդ մէջն ալ: Ամէն օր քիչ-քիչ կարգա, կրկին ու կրկին կարգա՝

Կարգալու համար որոշեալ ժամանակ մը ունենալ հարկ է: Եթէ երկայն ժամանակ մը չես կրնար, գոնէ օրը քառորդ ժամ մը յատկացուր: Առաւօտեան 15 վայրկեանը ուրիշ տեսնուայ քառապատիկին հաւասար է, ժամաւանդ որ երբ մարդուն միտքը թարմ է: Ուշադրութիւն ըլլէ որ, այդ ժամը չի գրաւուի ոեւէ ուրիշ մէկ քանով մը:

Եթէ կարելի է, Աստուծոյ շունչը կարգալու համար առանձին տեղ մը մը ունեցիր: «...Մտիւր քու ներքին սենեակդ ու դուռդ գոցէ...» Եթէ առանձին սենեակ մը կարելի չէ ունենալ, ջանա՝ որ առանձնութեան տան մը ունենաս:

Կարգալու համար մասնաւոր կերպ մը սխտեմ մը ընտրէ: Համար առ հա-

մար, գլուխ առ գլուխ և գիրք առ գիրք սերտել կայ, ասոնց մէջ վերջինը կրնայ ամենաօգտակարը հանգիստնալ: Օրինակի համար, Յոբին գիրքէն ամէն օր մաս մը կարգայ մինչեւ որ ամբողջ գիրքը լինցնես, չլինցուցած ուրիշ գիրքի մը մի սկսիր: Աստուծոյ շունչին մէջ մասնաւոր նիւթերու վրայով սերտել ալ կայ, որ այս կերպը շատ օգտակար կրնայ ըլլալ: Օրինակի համար, առնենք հաւաստի բառը կամ նիւթը. Աստուծոյ շունչի բոլոր գիրքերը փնտռէ՝ և գրտիր ինչ որ գրուած է այս նիւթին վրայ: Առօրեայ ընթերցումներու սխտեմներ կան, որ այս ալ կերպ մըն է: Այլեւս որը որ քեզի օգտակար է, զայն ընտրէ և յարատեւէ անոր մէջ:

Բ. Մտածելով կարգա՝

Մարտողութիւնը ինչ որ է կերակուրին համար, նոյնպէս է սերտողութիւնը Աստուծոյ շունչին համար: Մեր կերած կերակուրին միայն մարտած մասը կը սնուցանէ մեր մարմինը: Նոյնպէս ալ Աստուծոյ շունչը իր սերտուած մասով մտածելովը կրնայ մեզի օգտակար ըլլալ: Աւելի լաւ է յաճախ և քիչ քիչ կարգալ, քան մէկ անգամ և շատ կարգալը: Մտածելով կարգացուած մէկ համարը շատ աւելի սնունդ կուտայ հաւատացեալին հոգւոյն քան թէ հարեւանցի կարգացուած մէկ գրուելը:

Ինչ կը նշանակէ սերտել՝

(ա.) Գրողին միտքը հասկնալ: Երբ որ Աստուծոյ շունչին տեղ մը կարգալու ըլլաս, ջանա՝ հետեւեալ հարցումներուն պատասխանները գտնելու: Ո՞վ է գրողը, ե՞րբ և որ՞նչ համար գրուած է, ի՞նչ նպատակով գրուած է: Այս կերպով զայն շատ աւելի

առ կրնաս հասկնալ:

(բ.) Հասկնալ Աստուծոյ պատգամը:

Գրողին միտքը քեզ կ'առաջնորդէ հասկնալու բուն Հեղինակին՝ Աստուծոյ նպատակն ու պատգամը: Աստուծածաշունչը կարգաւորու մէջ, ամենակարեւորը Աստուծոյ միտքը և անոր պատգամը հասկնալ է: Աստուծածաշունչը ներշնչուած գիրք մըն է, անիկա պէտք է միջոց մը՝ լլայ քեզ ներշնչելու:

Գ. Աղօթքով կարգա՛:

Աստուծածաշունչին հեղինակը Աստուծոյ ինքն է: Ամէն հաւատացեալ որ զայն կը սիրէ, պէտք է աղօթքով խնդրէ Հեղինակէն լոյս և իմաստութիւն զայն հասկնալու համար: պէտք է նաև հաւատացեալը խնդրէ որ Աստուծոյ ինքը բացառի գիրքը իրեն: Առանց աղօթքով կարգացուելու, կատարեալ մտնուած, ներշնչուած, օրհնութիւն և հոգեւոր անունդ կարելի չէ ունենալ:

Դ. Գործադրելով կարգա՛:

Այս կերպը, կ'ուզեմ Մատթէոս 6րդ գլուխէն մի քանի օրինակներով բացատրել: Սեպենք թէ՛ 12րդ հոմարը կը կարդաս, «Մեզի ներէ մեր պարտքերը, ինչպէս որ մենք ալ կը ներենք մեր պարտականներուն» և կարդացած ատենդ մտաբերեցիր թէ՛ ասինչ կամ այնինչ անձին հետ զօտուած վիճակ մը ունիս: Առաջին մէկ ատիթով գնա՛ և այդ մարդուն հետ

հաշտուէ: Այս բանը ընելը, աղօթքը շարունակելէն կարեւոր է, քանզի չհաշտուող հոգիով մատուցուած աղօթքները չեն ընդունուիր Աստուծմէ: Առնենք 21րդ համարը. — «Զէք կրնար ծառայել Աստուծոյ ու Մամոնայի»: Կարդացած ատենդ մտաբերեցիր քու գործառնութեանդ մէջ ծուր բան մը: Անմիջապէս, միեւնոյն օրը այդ չտէ: Սեպենք թէ՛ 25րդ համարը կը կարդաս, — «Հոգ մի ընէք...»: — Բեզ թշուառ ու անհանգիստ ընող հոգ մը միշտ քու միտքդ կը զբաղեցնէ: Անմիջապէս այդ նիւթը Տէրոջը յանձնէ և այդ հոգդ մէկգի ձգէ: «Հոգ մի ընէք» կ'ըսէ: Հնազանդէ այդ պատուիրանքին: Հոգ ընելու, ունակութիւնը ձգէ՛, Աստուծոյ յուսալով ապրէ: Բու բոլոր բեռերդ Անոր վրայ նետէ: «Զեր ամէն հոգը անոր ձգեցէք, վասնզի անիկա ձեզի համար կը հոգայ» (1 Պետ. 5:7):


Օրինակներ աւելցնելու պէտք չըկայ: Մեր միտքը ընթերցողին հասկըցնելու համար այնքանը բաւական է: Աստուծածաշունչը կարգաւորով մեր նպատակը Աստուծոյ կամքը հասկնալ և զայն գործադրել ըլլալու է: Ուրիշն կարգաւ զայն Աստուծոյ հնազանդելու նպատակով: Եթէ այսպէս կը կարդաս, անիկա կը կենդանանայ միեւնոյն ժամանակ քեզ ալ կը կենդանացնէ:

ՎԵՐ. ԹԷՈՏՈՐ Ե. ՏԱՂԼԵԱՆ

ՔԱՒՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Աստուծոյ ամբողջ ծրագիրը մարդը վերահաստատել է իր պատկերին, և վերցնել իր ինկածութենէն, մէկ խօսքով՝ զայն կատարեալ ընել, ջնջել իր բոլոր մեղքերը, մաքրագործել իր հոգին և լեցնել զայն իր սրբութեամբը, այնպէս որ ոչ մէկ անսուրբ բնութեան ինչ, չար ցանկութիւն կամ անմաքուր սէր և խորհուրդ չբնակին և գոյութիւն չառնեն իր ներսիդին: Ասիկա, միայն ասիկա է ճշմարիտ կրօնքը, ասկէ նուազ փրկութիւն, Բրիստոսի կատարած պատարագին և Հոգւոյն Սրբոյ ներգործութեան անպատուարք պիտի ըլլար, քրիստոնէայ անունին և սրբութեան կոչումին անարժան: Անոնք որ կը հեգնեն զայս Աստուծոյ խօսքը ծաղրողներ են որոնցմէ չատեր բոլորովին օտար են քրիստոնէութեան և կը նստին ծաղր ընողներուն տեղը: Ասիկա ուրացողը՝ ուրացած կ'ըլլայ նաև ամբողջ տարողութիւնն ու ծրագիրը աստուծային յայտնութեան և Բրիստոսի առաքելութեան, և անոնք որոնք հակառակ վարդապետութիւն կը քարոզեն մտքով Անդհնոմականներ են:

Է. ԳԼԱՐԲ



ՄԵՐ ՀԱՅ ԵՐԿՍԵՆԻ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒՆ

ՍԱՏԱՆԱՅԱԶՈՒԿԻ ՄԸ ԳՐԿԻՆ ՄԷՋ

կամ

ՎԵՐԷՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ

Մովը տնեղօրէն կը մռնչէր և կատաղիօրէն կը գոռար: Քէյփ Թափէի նաւահանգիստին քարափին վրայ մեծ անձկութեամբ էր որ մարդիկ կ'ըսպասէին շոգենաւին ժամանումին: Արդեօք ան ապահով պիտի կրնա՞ր հասնիլ: Ահա արդէն նաւահանգիստ մուտք գործած էր, գրեթէ խաղաղ ծովը էր երբ բախեցաւ կամրջակալին: Որոշ էր թէ բախումը մեծ վնաս պատճառած էր, ոչ թէ միայն նաւուն այլ կամրջակալին ալ, որովհետեւ շէնքին պատէն խոշոր մաս մը փլած էր:

Երբ փոթորիկը հանդարտեցաւ, պէտք անհնուեցաւ գիտնալ եղած վնասին չափը: Քէյփ Թափէ կրնար պարծենալ նշանաւոր սուզողներ ունենալուն համար, սակայն անոնցմէ ոչ մէկը Բալմըրին հետ կարելի էր բաղդատել, ա՛յնքան ուժով, յանդուգն և ճարտհար էր ան: Անոր ինկաւ քննութիւն մը կատարելու գործը:

Իր սուզահանգերէն մէջ հսկայ և տգեղ երեւոյթ մը առած էր, երբ պատրաստ էր ծովուն յատակը իջնելու, տեսնելու բնութիւնը՝ եղած վնասին: Պէտք եղած հրահանգները տուաւ վերը կեցող իր ընկերոջ, որպէսզի ան աշալուրջ հսկէ և վտանգի նշանը իմանալուն՝ զինքը քաշէ: «Ուշադրութիւն, ձէք ըսաւ ան, իմ կեանքս քեզմէ կախեալ է»:

Մովը հանդարտ էր և իրեն հա-



մար շատ ժամանակ չառաւ կատարութիւն քննութիւնը, հսկայ ճեղք մը բացուեւ էր կամրջակալին վարի մասին վրայ:

Յանկարծ, ժայռի մը խորշէն բան մը իր վրան նետուեցաւ և շուրջանակի բռնեց թեւէն: Բալմըր զարհուրեցաւ երբ հոսկյաւ թէ Ստանայաձուկի մը ճիրաններուն մէջ կը գտնուէր: Երբ կը խորհէր իր գիրքին ահաւորութեան վրայ, գազանը նետեց միւս կնճիթը և անցուց սրունքէն, ուրիշ մը կուրծքէն, այսպէս Բալմըր մահուան գրկին մէջն էր (տե՛ս պատկերը): Ան այս անպաշտպան վիճակին մէջ կը նմանէր երկաթեայ կապանքներով բռնուած մարդու մը: Ինչ կըրնար ընել, բացարձակապէս անկարող էր ինքզինքը ազատելու: Գիտէր որ միայն մէկ միջոց մը ունի և ան ալ Վերէն Օգնութիւն ստանալն էր:

Երբ Վերէն օգնութիւն, կամ սոյոգ կործանում, ՀՈՆ ՎԵՐՆ էր իր յոյսը:

Յուսահատութեան սաթած իր ամբողջ կորովովը քաշեց վտանգի նշանը

ազդարարող չուանը: Արդեօք ձէք ու-
շադիր կ'սպասէ՞ր իրեն, ինչպէս որ
սպասարուած է, իրեն, արդեօք պիտի
լսէ՞ իր յուսահատական նշանը, պիտի
կարենա՞յ ունենալ այն օգնութիւնը
որ միակ յոյսն էր եթէ ոչ Ա.ՀԱՒՈՐ
ՄԱՀ կ'սպասէր իրեն: Մտալկիչ էր
այս անորոշութիւնը երբ տանջող գա-
ղանը դժոխային աչքերը իրեն սեւե-
ռած կը նայէր: Տրուած ազդարարու-
թեան պատասխանին յապաղումը իրեն
ՅԱԽԻՏԵՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ մը երեւցաւ
ԱՍՐՍԱՓԱՍԱՌՆ:

Ստկայն փառք Աստուծոյ, ձէքին
զօրաւոր բազուկը մեքենային վրան
էր, և Բալմըր ի մեծ ազատութիւն
իրեն, տեսաւ թէ վեր կը բարձրանար,
ստկայն իր թշնամին ալ կ'ելլէր իր
հետը, անիկա իր կաշկանդումը կը
շարունակէր, ո՛հ այդ ահաւի սեղմու-
մը և կապարային ծանրութիւնը դեռ
իր հետն էր: Տակաւին յոյս կար, ու-
րովհետեւ վերէն օգնութիւն կուգար:
Վեր-վեր բարձրացաւ. լոյսը հետզհետէ
կը զօրանար և ծանրութիւնը կը նը-
ւազէր, մինչեւ որ վերջապէս ցորեկ-
ունն զուարթ լոյսը սկսաւ փայլիլ
իր կաթկթող սաղաւարտին վրայ: Ջու-
րին երեսը հասած էին:

— Ողջ, առո՞ղջ, ստկայն այս ի՞նչ
է քեզի հետ կը բերես, հարցուց ձէք,
այլապէս, երբ տեսաւ գաղտնի Բալմը-
րին փակած:

— Ի՞նչ արդարեւ: Դանակ և կա-
ցին գործածուեցան, կտրելու կտրը-
տելու գաղտնի թեւերը որ իւրաքան-
չիւրը երեք մէթր երկայն էր, որոնք
շուրջանակի սեղմեր էին մարդուն մար-
մինը: Դիւրին գործ չէր ասիկա որով-
հետեւ այս երկար կնճիթներ իրենց
վրայ ունէին հարիւրաւոր մանր ծծոց-
ներ:

Ժամանակ մը կապուած և չզթայ-
ուած էր ծովուն խորերը, այժմ ան կը

Ե Ր Կ Ո Ւ Գ Ո Ւ Ռ

Երբ մեր նայուածքը յառեմք դէպի,
Պատուհանն Սուրբ Մասեանի,
Մեր աչքերուն պիտի երեւի,
Երկու դռներն այս աշխարհի.

Քու աչքերդ դէպի Սուրբ Գիրք,
Անգիմ հոգի, դուն յառա՞ծ ես:

Այս դռներէն մին է խիստ լայն,
Որուն տեղն է նեղ Սասանան,
Կը բաւիտ նոյն վայելքներ սին,
Մեղքով հիւսուած փառքեր ունայն.

Այս ահաւոր մեղքի դռներ,
Անգիմ հոգի, ես դարձա՞ծ ես:

Կենար ազատ, Աստուծոյ փայլուն լոյ-
սին մէջ:

Ճիշդ այդպէս է մեղքին տնդա-
մալուծող ուժը որ հոգին առած է իր
ճիրաններուն մէջ, և որմէ մարդ ինք-
զինքը ազատելու բացարձակապէս ան-
կարող է: Ոչինչ կարելի է ընել. բայց
միայն ստանալ ՎԵՐԷՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ:
Դուն որ կը կարդաս այս պատմու-
թիւնը, ունի՞ս դիւրաւ պաշարող մեղքի
ճիրանը քու շուրջդ: Խնդրինքդ ա-
զատելու համար Բալմըրէն տարբեր
բան մը ընելու կարող չես: Ըրէ անոր
պէս, վտանգի նշանը զրկէ (աղօթքով)
երկինք և Ան պիտի ազատէ քեզ, «Ով
որ Տէրօջը անունը կանչէ, պիտի փըր-
կուի» (Հռ. 10:13):

Բարեկամս, եթէ քեզի փակած մեղ-
քի մը գերի ես՝ օգնութիւնը վերէն է:
Խնդրէ՛ Տէրօջմէն և պիտի ընդունիս
փրկութիւն: Քրիստոնեայի դրօշակին
վրայ գրուածը կատարեալ փրկութիւն
է: Եւ դուն ալ պիտի երգես, «Վերէն
լսեց իմ աղաղակս, զիս կորստեան
փոսէն հանեց ու ոտքերս վէմին վրայ
ամուրցուց»:

Սկրորդն է նեղ, սիրոյ Փրկչին,
 Յաւերժական Տէր Արքային,
 Հոն մեցողներն պարտին նեցել
 Մեղքի բեռներն իրենց սրտին.
 Դարձ մեղքերն սիրեալ իսպառ,
 Անգին հոգի քօթափա՞ծ ես:

Յրկու դռներն ալ կ'ընթանան,
 Դեպի յաւիտեանականութիւն,
 Մէկը կրակ ու բոց անեղձ՝
 Միւսը փառք եւ անմահութիւն.
 Այս երկուքն անգին հոգի,
 Դուն ո՞ր մէկը ընտրած ես:

Մեր առաջնորդն սփանչելի,
 Կանգնած դուռը բեզ կը նայի,
 Թէ յոգնած ես մեղքի բեռեղ՝
 Կ'ըսէ փրկիչդ եկուր ինձի.
 Այս ճրարեմ. անգին հոգի,
 Դուն ի սրէ ընդունա՞ծ ես:

Սակայն շատերն հրապուրուած,
 Սաղայելի խոստումներէն,
 Փրկչին սիրոյ մեկդի ձգած,
 Ներս կը խուժեն լայն դժոխքէն:
 Դուն անոնցմէ, անգին հոգի,
 Բոլորովին անշատուա՞ծ ես:

Թէ կը թեմշանք ո՞ր ընդունուիցն,
 Փառաց դռնէն այդ երկնային,
 Նախ, մեք մեր սիրտն, բանալ պարտին
 Մեր պաշտելի Քրիստոսին:
 Սրտիդ դռներն անգին հոգի,
 Յիսուսի ալ դուն բացա՞ծ ես:

Կարօտակեզ եւ հիացմամբ,
 Իրեն երթանք՝ այն նեղ դռնէն,
 Որ կը բուրէ սեր խնդութիւն:
 Լոյս, փառք, կեանք եւ անմահութիւն:
 Աստուածորդին հրաշափառ,
 Իբր փրկիչդ ընդունա՞ծ ես:

Քոյր ՓԱՌԱՆՁԵՄ ՓԷՐՐԻ-

Աղեքանդրիս:

ՀԱՐՑՈՒՄ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆ

Հարց.— Ի՞նչ է Նրեմ. 17:13ին իմաստը, հանեցիք բացատրել:

Պատ.— «Բեզմէ հեռացողները երկրի հողին վրայ պիտի գրուին» խօսքով ըսել կ'ուզուի.— «Անոնք որ Տէրը կը թողուն՝ պիտի նմանին այնպիսի մէկուն, որուն անունը հողին կամ աւազին վրայ արձանագրուած է, որ առաջին հովէն պիտի աւրուի և առաջին անձրեւէն իսկ՝ պիտի սրբուի ու աւլուի: Տէրոջը թշնամիները պիտի կորսուին և չուտով մոռացութեան պիտի մոտնուին, անոնց յիշատակը պիտի չապրի, և անոնց անունները պիտի չպատուուին»:

Միւս կողմէ Աստուծոյ մօտ ապրողներուն անունները պիտի գրուին Կենաց գրքին մէջ (Ղուկ. 10:20. Փիլ. 4:3): Մաղ. 3:16ին մէջ ուրիշ շատ ուշադրաւ համար մը կայ, ո՛ւր մենք կը տեսնենք որ Աստուծոյ զաւակներուն իրարու հետ խօսակցութիւնը անգամ (և այդ խօսակցութիւնը Աստուծոյ մօտին էր) իբր յիշատակ կ'արձանագրուի, որպէսզի անոնք միշտ Տէրոջը առջեւ յիշուին և չմոռցուին, ինչպէս իրենց անունները:

Հարց.— «Բնաւ մեկուն պարտական մի գտնուիք, միայն թէ մեկզմեկ սիրել», խօսքէն ի՞նչ պիտի հասկընանք (Հռ. 13:8):

Պատ.— Պարզապէս սա՞ թէ՛ ամէն մարդ ուղղամտօրէն պէտք է վճարէ ինչ որ փոխ առած է վերադարձնելու համար: Անշուշտ, սոյն համարը մեզի չարգիլեր փոխառութիւն ընելը, կամ առանց կանխիկ դրամ վճարելու ապրանքին գնումը, ո՛րեւէ ձեւի տակ

պարտական ըլլալը: Այլ կը նշանակէ թէ այդպիսի պարագաներուն՝ պէտք է յարգել համաձայնութիւնները, պայմանագրութիւններ, և ճիշդ ատենին վճարել կամ գոհացնել: Սակայն միակ պարտքը որ երբեք լիուլի վը-

ճարել անկարելի է, ան ալ սիրոյ պարտքն է որովհետեւ որչափ ալ սիրենք մարդիկը, դարձեալ պարտինք սիրել շարունակել զանոնք:

Ս.

ՊՈՆԵՄԻՈՅ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ

ԺԲ. դարուն Ուսուցիչական Եկեղեցւոյն (Եւրոպայի ամենահին բարեկարգեալ եկեղեցին) ազդեցութիւնը, հոգեւոր արթնութեան մը պատճառ եղաւ, որ կը շեշտէր աւելի մաքուր կեանքը կղերներու համար և ժողովուրդին մէջ, յետոյ խղճի ազատութիւն և Սբ. Գրքին հրատարակութիւնը ազգային լեզուով: Երկու դարերու տեւողութեան մասնաւոր ժ. Ին, երբ պապականութեան ծոցին մէջ հերձուած կար, Պոնեմիոյ ունեցաւ շատ նշանաւոր քարոզիչներ: ԺԵ. դարուն սկիզբները, Ճոն Հոսսի առաջնորդութեամբ տեղի ունեցաւ Եւրոպայի ամենէն նշանաւոր շարժումներէն մէկը: Ան ամբողջութեամբ ընդգրկեց Ուիք-լիֆի վարդապետութիւնը, ասիկա բարեկարգութիւն մըն էր որ կը շեշտէր հաղորդութեան սեղանին պարզ մատակարարումը (հաց և գինի), կեանքի պարզութիւնն և նկարագրի մաքրութիւն: Անոնց մէջէն յառաջ եկաւ աւելի մաքուր շարժում մը «Եւրոպայութեան Միութիւնը» անունով: ԺԶ. ին մէջ Լուդերին և Կալվինին ազդեցութիւնը ուրիշ նոր ոգեւորում մը տուաւ, որուն այնքան պէտք կար, որ կը շեշտէր քրիստոնեայ նկարագիր և Սբ. Գրոց հնազանդութիւն: Ասիկա պատճառ եղաւ երկու խումբերուն իրարու հետ հաշտուելուն, որոնք միացան ԺԷ. Դա-

րուն սկիզբը: Երբ այս միութիւնը կ'իրականանար, ԺԷ. Դարուն սկիզբները, Պոնեմիոյ և Մորավիայի ժողովուրդին 90 առ հարիւրը բողոքական էին: Այնատեն այդ երկիրը մեծաւոր Բողոքական երկիրն էր: Սակայն 1620 ին Բրաւայի մօտ Ուհայթ Մալ-նքըն կոչուած պատերազմի ժամանակ (որ տեղի ունեցաւ երբ Հապսպուրկները՝ Ավստրիոյ և Հոլմի Եկեղեցւոյն միացան բողոքականները բնաջինջ ընելու) ամէնը կորսուեցան: Անկիցաւելի անխղճ և գազանային հալածանք քիչ գոյութիւն ունի պամութեան մէջ: 160 տարուան մէջ Պոնեմիոյ և Մորավիոյ 4 միլիոն հաշուով բողոքականութիւնը վերածուեցաւ 1 միլիոն 2 հարիւր հազարի, որմէ մեծ մաս մըն ալ պակսեցաւ գաղթի պատճառաւ: Բոյոր քարոզիչներ տարագրուեցան, եկեղեցիներ գրաւուեցան կաթոլիկներու կողմէ, Սբ. Գիրք և կրօնական գրականութիւն այրուեցան: Ազնուական դասու պատկանող 160 ընտանիքներ աքսորուեցան և ժողովուրդը յետին չքաւորութեան մատնուեցաւ:

Երբ ԺԸ. դարուն մէջ Ավստրիոյ կառավարութիւնը մասնաւոր օրէնքով մը ազատութիւն շնորհեց, զարմանալի իրողութիւն մը ի յայտ եկաւ, ան ալ սա՛ էր՝ թէ տակաւին 70 հազար բողոքականներ գոյութիւն ունէին վե-

կազմակերպուելու պատրաստ:

Այս եկեղեցիները մեծ դժուարութիւններով գործը յառաջ տարին, Ավստրիական կայսրութեան ներքեւ 140 տարի, մինչեւ 1914 մեծ համաշխարհային պատերազմը: Անկէ ետքը իրարու հետ միանալով «Աւետ. Եկեղեցի Պոհեմիոյ Եղբայրութեան» անունը առին: 1918ին անոնց թիւը 100, 000 էր, այժմ հաւաքուածք՝ այդ թիւին: Հարիւր նոր եկեղեցիներ շինուած են, ունին զարգացած պաշտօնեաներ, նաեւ ընդարձակ գործունէութիւն: Երրորդ Բայիին այս երկիրները գրաւելէն ետքը, կ'անգիտանանք իրաց վիճակը:

Այս հին եկեղեցիներու մէկ ուրիշ օգտակար գործը եղած է՝ միսիոնարութիւնը: Մորավեան միսիոնարութիւնը որ ամենէն հինն է, ծանօթ է ամէն կողմ իր կատարած բազմօգուտ գործերով:

Ճօն Հոլսի արձանը կանգնած կը գտնուի գեղեցիկ քաղաք կոչուած Բրակայի հրապարակին վրայ, իբր ազգային և քրիստոնեայ մարտիրոս: Եւ Բրակայի պատկերասրահին մէջ ամենէն արժէքաւոր պատկերը այն պատկերն է՝ որուն մէջ նկարուած է Կոստանսի ժողովը, ո՛ւր Ճօն Հոլս կը դատապարտուի խարոյկի վրայ այրուելու:

ՀԵՐՈՍԱԿԱՆ ԱՐԱՐՔ ՄԸ

Ստուար բազմութիւն մը խռնուած էք տան մը տուփէ, և ամէն ոք հեւի հեւ անձկութեամբ կը դիտէր հրոյ ճարակ դարձած այդ տունը: Բնակչութիւնը ազատուած էր, յանկարծ լսուեցաւ մօր մը աղետալ ձայնը, որովհետեւ նկատած էր թէ իր սիրասուն փոքրիկը տակաւին տան մէջն է: Ոչ ոք կը շարժի: Բազմութեան մէջէն տհա՜ղ ուրա կուգայ կըտրիճ երիտասարդ մը, որոշած է իր անձը վտանգի ենթարկելով փրկել փոքրիկը: Անմիջապէս սանդուխ մը կը դրւի, և ինքը վեր կը մագլցի: Երբ կը հասնի պատուհան, կը տեսնէ ահռելի բոցերը՝ կը վարանի ներս մտնել: Վարէն բազմութիւնը շուն-

չերին բռնած կը նային քով երիտասարդին, սակայն կը կռահեն իր վարանումը: Ամբոխին մէջէն մէկը կ'ազաղակէ, «ե կ է ք ծափահարենք զինքը»: Վարէն իրեն համար կատարուած այս քաջալերութիւնը կը մղէ երիտասարդը ահնարինը ընելու, կը ցատկէ ներս, կ'ազատէ փոքրիկը: Թէպէտ կ'ուենենայ ծանրայրուցաներ:

Ով ընթերցող, տարին լրանալու վրայ է, թերթը կը կատարէ իր պարտականութիւնը ծանր զոհողութիւններով: Դուն եւս գէթ վճարելով բաժնեգիրնդ քաջալերեցի՞ր մեզ, կատարեցի՞ր քու պարտքդ, Տէրը օրհնէ մեր ընթերցողները:

Կը խնդրուի մեք ընթերցողներէն չղրկել իրենց բաժնեգիրը անձնակա՜ն չե՜հով, այլ մանա-փոսով:

ԱԼԹՈՒՆ ՈՒՓԱՂԸ

ԹԱԶԻՅԷ

Զեվալլը աստէմ, քէնտի քէնտինի պատագէն փէրիշան էտիօրսուն, չիւնքի էթրաֆընտաքիլէրտէ պիր եա իքի քիմսէ սէնի թաճիզ վէ թազիպ էտիօրլար: Օնլար սէնի սէվմէզլէր, եափառըլըն հէր չէյտէ պիր գոստուր պուլուրլար, սէնինլէ սէրթ չէհրէ վէ թէյա պիր թարզլէ մուսմէլէ էտէրլէր: Տիւշիւնիւլարսունքի անլէր սունա զիյան իրոսա էտիօրլար, անլէրի սէնին խոյր իշլէրիյին էօնիւնտէ պիր էնկէլ կիպի կէօզէտիօրսուն:

Հայաթըն ամը քէտէր իլէ կէչիպ զէվալ պուլուր, վէ կիթկիտէ մէֆթուր պիր հալա կէլիօրսուն: Ճէստրէթլէն, քէտէր հիսս էտէճէք եէրտէ Ալլահա շիւքը էթ, պիզզաթ օ չախսար՝ սէնին մուճիպի խէճալէթ խաթալարա, իրթիմալ հաթթա պէօյիւք կիւնահլա տիւշմէքտէն հըֆզ էթմէք իւզրէ վասըթալար հալինտէ իսթիմալ էտիօրլար: Անլէր հէքիմին գուլլանառըլը եազըյա պէնզէր քի միւհլիք եարատան: Ճէրահէթի տիշարը չէքմէք իշիւն գուլլանըլըր:

Ալլահ կէօրիւլարքի աշըրը մէսէրտէթ, ըէֆտհը հալընա սէպէպ օլան ուֆազ թէֆէք չէյլէր՝ սէնի տուտա կէվլէմէյէ վէ գայդուսըզլըղա տիւշիւրէճէք, աշըրը տէրէճէտէ կէօրտիւլին հիւսնի թէվէճճիւհ սէնի պօղուպ զէմինի նէսնէլէրէ սարըլմանա սէպէպ օլաճագ, օլ սէպէպտէն գալպինի սաւտէլիք վէ նէզաֆէթտէ հըֆզ էթմէք իշիւն, օրայա պաազը թիքէնլէր էքիյօր, վէ սէնին՝ հագզըն տէյի պիլտիյին հէփ քէյիլէրինտէն սէնի միւհլաթի գըլըյօր: Ալլահ պիլիյօր քի, չօք մէտ-

հիյէ սանա թէքէպպիւր սէպէպի օլաճագ, վէ տիկէրլէրէ տօղլու ազ սապըրլը եափաճագ, օլ սէպէպտէն սէնի մուհագգար գըլըյօր իմտի պրագ քի պու չախսար վար օլսունլար, չիւնքի անլէր պիլմէյէրէք սէնին տէրունինտէ Ալլահըն իշինի եափըյօրլար:

Էյէր անլէրի իշթիւրաք հիսսիյլէ սէվլէմէյօր իսէն, ճէհտ եօլուլլէ անլէրի սէվմէյէ չալըչ վէ Ալլահա տէ, «Էյ Ալլահըմ, պրագ քի անլէր սէնի կիւճէնտիւրմէյէրէք պէնիմ թագաթիսմէ սէպէպ օլսունլար»:

* * *

ՍԱՏԷ ՊԻՐ ՏՈՒՍ

Էյ Յիսուս, ճէլալ վէ իզզէթինտէ, զէմինտէ օլան սէֆալէթի ունուլմա, մէրհամէթ էյլէ էօյլէլէրէ քի՝ Ալլահ անլէրէ քէնտի սէվտիքլէրի քիմսէլէրտէն ալըլմագլըք ամը թէճրիպէսինի իրսալ էթմիշ տիր:

Մէրհամէթ էյլէ քիմսէսիզ գալմըչ վէ գալպի ամը քէտէր իլէ տօլու ճանլարա, անլէր օ քէտէր ալթընտա պաազէն էզիլիյօրլար, պաազէն հէյպէթ իյլէ մէմլու տըրլար: Լութֆ էյլէ էօմրիւն միւշքիլաթընա գարըլ ճէնկտէն տօլայը մէյուսիյէթտէն նաշի պայըլըն տիւշմիւշ քիմսէլէրէ:

Ինայէթ էյլէ օ թագըմ տտէմլէրէ քի պախթ անլէրէ թէպէսսիւմ էտիպ, տիւնեա անլէրի ճէզպ էտիօր, վէ անլէր տիւնեա գայդուսընտան տրի վէ պէրի տիրլէր: Լութֆ իլէ պագ, Մէնին թարաֆընտան լաթիֆ վէ հէսասա պիր գալպէ մալիք օլանլարա տօղրուս:

Մէրհամէթ էյլէ օ քիմսէլէրէ քի ալթըլ պիզի սէվմէքտէն տուր օլմուշլար թաքի անլէր պիզէ իրոս:

էթտիքներն աճընը ասլա թառմայա-
լարս ինայէթ պուշուր սէվտիմիզ
հէփ քիմսէլէրէ, անլէրի մուգատտէս
գըլ հաթթա էլէմ թարիգիյէ պիլէ օյ-
սա, էյէր անլէր սէնտէն ուզապլաշըր
իսէ, օհ մէսէրրէթիմի պէնտէն ալ, վէ.
անլէրի սիհրի պիր գուզվէթ իլէ կի-

պի Սանա ճէլպ էյլէ:

Մէրհամէթ էյլէ աղլայանլարս,
տուա՛ էտէնլէրէ, տուա՛ էքմէյի պիլմի-
յէնլէրէ:

էյ Յիսուս, ճիւմլէյէ իւմիւս վէ
Սէլաւէթ պախշ էյլէ:

ԵՐԷՑ

ՊԵՆԻ ՊԱՂՐԸՆԱ ՊԱՄԸՅՈՐ

Գանառատաւ պիր քիլիսի չօպանը
հալինտէ իլլէր իքէն, էվվէլճէ քէնտի-
նի թանըմատըղըմ պիր առէմ պիր
սապահլայըն ետնըմա կէլտի Վտիզ
օլտուղըմ թաստըգ էթտիքտէն սօնրա
տէտի, «էօլիւմճիւլ հաթթան պիր գա-
տըն պէնի սոնա կէօնտէրտի, բէճա
հօլլու սիւալ էտիյօրքի աճէպա կէլիպ
քէնտիսի իչիւն տուա էթմէք իսթէր-
միսինիզ Տէտիմ քի, «չօգ մէմուլէթ-
լէ, ֆազաթ պիր աղ սօնրա օլմասըն-
տա պիր մանի վա՞ր մը» Տահա էյի
տիրքի տէրհալ կէլէսինիզ, թէէիիր
էթտիյինիզ հալտէ օլաքի աղըր խա-
թա օլտուղընտան կէօրմէյէ ֆուրսու-
թընըզ օլմայա» տէտի Բէնտինի թէ-
էմին էթտիմ քի պիր տաղիգէտէն հօ-
լա չըգարըզ, վէ տէրհալ փալթօիլէ
չափգամը ալըպ հօլա բէվան օլտուգ,
կիտէր իքէն պազաթըմ քի առէմ պիր
շէյ տէմէք իսթէյօր Օ տէտի, «Օրայա
կիթմէգտէն էվվէլ պասա՛ղը շէյլէր
պիլմէքլիյինիզ լազըմ տըր, մէրգուլմէ
ֆէնա մահալլէյէ աիտ պիր էվտէ տիր
տիւշիւնտիւմ քի պուշու պիլմէնիզ
օրայա կիթմէք գարարընըզ իւզէրինէ
պիր թէէսիրի օլուր» Պուշա ճէվապէն
«Տէրհալ կիտէլիմ» տէտիմ:

Օտատան իչէրի կիրտիյիմիզտէ
կէօրտիւմ քի սէտիր իւզէրինտէ պիր
գըզ ետթըյօր էվվէթ, էօլմէք իւզրէ

իտի Սիմաճա գըզըմա պէնգէտիյինտէն
անիտէ շէրէֆսիզ պիր խանէտէ օլտու-
ղըմը ունուլթտըմ:

Պէնի տէրհալ պիր խահիշ իսթի-
լա էյլէտի, վէ օ խահիշ մէրգուլմէյի
Բրիստոսա գըլաղըզլամագ իտի Օ
պանա պազարագ տէտի «էֆէնտի,
սիզ պէնի թանըմայօրսուշուզ, ֆազաթ
պէն սիզի թանըրըմ, պուրայակէլտի-
յինիզէ նէ՛ գատար էյի էթտինիզ,
սիզի չաղըրմագ իչիւն սապահա տէյին
պէքլէյէմէզ իտիմ, չիւնքի էօլէճէյիմի
պիլիյօրում» էթրաֆընա պիրիքմիշ
տիկէր գըզլարը կէօսթէրիպ սէօղիւնէ
տէվամ էտէրէք տէտի, «Պու գըզլար
էօլէճէյիմէ ինանայօրլար, լաքին պէն
պիլիյօրում քի էօլմէք իւզրէյիմ, վէ
սիզ պէլաչիւպէն պէնի չուհալտէ էօլ-
մէյէ թէրք էթմէյէճէքսինիզ, Լազըմ
տըր քի պանա պիր ետրտըմ էտէսի-
նիզ»:

Բէնտի սէօյլէր իքէն տիւշիւնիյօր
իտիմ քի, քէնտինէ ետրտըմ էտէպիլ-
մէքլիյիմին էն էյի թարիգի հանկը՛սը
տըր Պու կիւճլիւլիւ քէնտիսի հալլ
էթտի Պանա սիւալ էթտիքի, Բ. Մու-
գատտէստէ հօլուշու շէօլտէ զայպ էթ-
միշ, պատէհու չօպանը տրայարագ պու-
լունան պիր գօյուշն նազլիյէթի վա՞ր
մը» «Պիլա չիւպէն եւզ գօյուշտան
պիրիսինին հօլտան սաիմըզ օլմասը

Նազլիյէթի Ղուկ. օն պէշինճի պապ-
տաւ նազլ էտիլիւր» տէտիմ: «Լուծֆէն
օնու պանա օգուլունուզ» տէտի:

Սէպազէթիտէ Կիրակի մէքթէ-
պինտէ եախօտ վախտէսինին տիգի իւ-
ղէրինտէ պու նազլիյէթի տինլէմիշ
օլմալը իտի, շիմտի անը տէրխաթի
էտիյօր իտի: Քիթապը աշըպ օ յոսգիլ-
յէթի օգուլունու, Պու նազլիյէթ պու-
տան էվլէլ պանա պու գատար տէրին
մանատա կէօրիւնմէմիշ իտի: Անը օ
գուտուգատան սօնրա տէտիմ քի պաշ-
գա պիր չօպան նազլիյէթի տէ վար,
օրատա չօպան քէնտի գօյունլարը ուզ-
րունա ֆէտայի ճան էտիյօր թաքի
գօյունլար հէլաք օլմալարա Պա'տէ-
հու տուա' էթտիմ վէ տուա էտէր իքէն,
մէրգուլէ Իպն Ուլլահըն նուրընա
տէլալէթ էտիլիյօր իտի: Կէօզիւմիւ
աշտըղըմտա, անըն վէ էթրաֆընտա տու-
րան գըղլարըն սիմալարընտաքի պա-
գըշը հիշ ունուտամամ: Պուտան էվ-
լէլ պու նէվ պիր միւսթէմիյունա թէ-
սատիւֆ էթմէմիշ իտիմ: Ֆաքաթ խա-
թանըն լիսանէն զիքր էթտիյի պիւս
պիւթիւն աճաիպ պիր շէյ իտի: Օ նի-
տա էտիպ տիյօր իտի, «Օհ, պու ա'-
ճաիպ պիր շէյ տէյիլ մի: Չօպան
պէնի պուլմուշ վէ պէնի Քէնտի պաղ-
րընա պաւլօր, պէնի պաղրընա պա-
ւլօր» Պիր չօպան ամէլինի կէօս-

թէրէն նէ' կիւզէլ պի իսթիլա: Խա-
թա պիւսպիւթիւն թէպէտտիւլ էթմիշ
իտի: Տիւշիւնտիմ քի աթթըզ օ րախաթ
օլաճազ, չիւնքի չօգ վաքա'ալար պի-
լիյօրում քի տտէմլէր աղըր խաթա-
լըզ գէմանընտա նէ վաքըթ Ալլահ. իլէ
սուլ' օլմուշլար իսէ խաթալըզլարըն-
տան տախի իֆաքաթ պուլմուշլարաւըր:
Օ սէպէպտէն պրազըպ կէթտիմ:

Էրթէսի սապահ անը թէքրար
զիյարէթ իչիւն կիթտիմ, կէօրտիւմ
քի պիրիսի գափըյա պիր շէյ տաւլօր:
Թամմ օ գէմանտա գըղլարտան պիրի
պէնի կէօրիւպ տէտի, «Օհ, վաիզ է-
ֆէնտի պուրատա օլմալըղընա չօգ է-
սէֆ էթտիք, Օ գատար խօշ իտի, սօ-
նա գատար մէսրուր իտի, վէ սօն սէօզ-
լէրի պու իտի, «Էյ գըղլար, Օ պէնի
պաղրընա պաւլօր. խօշճա գալըն,
պէն Չօպանըմ իլէ պիրլիքտէ եաշա-
մաղա կիտիյօրում»:

Պու վաքա'տան իթիպարէն,
«Տօգսան տօգուզ րախաթ եաթմըշ
աղըլ տէրունինտէ, Անճազ պիրի եօլտան
սափմըշ տաղլար թէփէսինտէ» իլաիսի
պանա տահա գըյմէթլի օլմուշ տըր,
վէ գանըշըմ պու տըր քի անըն վա-
սըթտալլէ չօգլար աղըլա տէլալէթ
էտիլմիշ տիրլէր:

Միւթ. Խ. Ս.

Ն Է Ր Է Տ Է Ս Ի Ն

«Րապպ Ալլահ Աղամա նիտա է-
տիպ' նէրէտէսին տէտի» (Թէք. 3:9):

Աղամ կիւնուհա տիւշտիւլիւնտէ
իլք իշի Ալլահըն հուգուրընտան ֆիրար
էտէրէք աղաճլարըն արգասընտա կիզ-
լէնմէք տէյիլ. իլլա խաթաւընը ան-
լալարազ' իգրար իլէ քէնտի Խալի-
գինէ եազլաշմազ իտի: Կիւնահըն թա-
պիաթը տտէմի քէնտի Ալլահընտան

այըրմազ, միւսրիֆ օղուլ կիպի ուզազ
տիյարլարա կէօնտէրէրէք տտէմի գայ
էթմէք տիր: Կիւնահ վասըթտալլէ
տիր քի Ալլահ տտէմլէրէ, վէ տտէմլէր
Ալլահա գայպ օլմուշլար տըր: Լաքին
գայպ օլան տտէմ իչիւն գայպ էթտիյի
Ալլահընը պուլմազ նաքապիլ տիր:
Կիւնահքեարըն իշի Ալլահտան ֆիրար
էթմէք տիր: Աղամըն կիւնիւնտէն

պէրրի կէօրիւմէմիշ տիր պիր ֆէրտ քի էվլէլա քէնտիսի Ալլահը արասըն, իլք արալան սուսիմա Ալլահ օլմուշ տըր Պիր գօյունն եօլու շաշըրտըղընտա քէնտիլիյինտէն սիւրիւյէ տէօնմէզ, իլլա չօպան անը տարալպ պուլուրս Ալլահ պու մանասա Ադամը տրատը, վէ շիմտի տէ հէփ զայպ օլմուշլարը «նէրէտէսին» տէյէրէք տրաշտըրըյօրս Ալլահըն տտէմէօլան պու իլք սիւալը փէք տճտիպ տիրս

Պու սիւալ իլք եհրսէ, ույանցըրընը պիր սէս ֆիր: Կիւնահ տտէմին զազամիրինի սէրթլէշտիրիր, զիհնինի քէօրէլտիր, վէ պէօյլէճէ տտէմ քէնտի հալընը կէօրէմէզ օլուր: Փար սօլուղընտա եօլմուլըզ էտէն քիմսէլէր պազէն պի հիսս պիր հալա կէլիրլէր, ճէսէտ ույուշուպ թտթլը պիր ույգու անլէրի իհաթէ էտէր, շալէտ տիգզաթ էթմէղլէր իսէ միւհլիք վէ էօլիւմ ույգուսընտ տիւշէրլէր Կիւնահ պու մանասա տտէմլէրին զազամիրինի ույուշտուրուր վէ անլէրին ըուհանի էօլիւմ ույգուսընտ սէպէպ օլուրս Պէօյլէլէրի քէնտի թէհլիքէլի հալարընտան ույանտըրմազ իչիւն Ալլահ անլէրի չօք ֆարզը եօլլարտա «նէրէտէսին» սիւալըլէ ույանտըրմազ իսթէր: Պիլաշիւպհէ իլահի պու սիւալ Ադամըն ույուլմը օլուն զազամիրինի սարստը, վէ անը կէլէճէք զազապտան ֆիրար էթմէսի իչիւն ույանտըրտը: Օ սէս անա տիւշտիւլիւնիւ, քէնտի խալիգինէ գարշը օլան իսեանընը խապէր վէրտի Ադամ սալահտան սօյունմուշ, չըփլազ օլտուղուհու կէօրտիւ էյ պու սաթըրլարը օգույան, տճէպա պու սէս սանատա եթթիշմէմիշ մի, Ալլահընտտը, սա՛տտէթ ու սէլամէթտէն տիւշմիւշ

օլտուղուհու, վէ շալէտ տէօնմէզ իսէր հէլաք օլտաղընը խապէր վէրմէյօր մը:

Պու սիւալ Ալլահըն պիգիմ իսէլասրմըզ հազընցա գալղուսըզ օլմասըղընը իմա եհր: Օ պիգի քէնտի հալըմըզ թէրք էթմէմիշ տիր, չիւնքի օ հալըմըզ՝ սօնսըզ սէֆուլէթ հալը իտի էյ կիւնահքետր, նէրէտէսին խապէրին վա՛ր մը, սօնսըզ կիրտապըն գըյըսընա նէ գատար եազըն կիթմիշսինք էյէր պու կիւն տէօնմէզ վէ իսէլասընը էլտէ էթմէզ իսէն պիր ազ սօնրա պաշգա պիր ալէմտէ կէօղիւնիւ տչուճազսըն, օրտնըն գուրտու էօլմէզ վէ տթէշի սէօնմէզ, էյէր ճանըլըն գըյմէթինի պիլսէ իտին, կէճէլէրի ույգուսըզ կէշիրիպ անը շօլ էմին Ձաթաթ էթսլիմ էթմէտիքճէ լահաթ էթմէյէճէք իտին: Օ սէնի տրալօր, «Ձիրաթ իպն իւլ ինսան զա՛յ օլունը տրալաք իսէլաս էթմէյէ կէլտի» սէն տէ Անը տրալօրմըսըն «Պէնի տրալանլար պէնի պուլուրլար» չիւնքի Օ պուլունմաղա հազըր տըր:

Պու սիւալ Շալսաի ֆիր: Օ՝ եիւզ գօյունը իչինտէն զայպ օլուն պիրինի տրալօրս էյ Ադամ նէրէտէսին, սիւալը հէր պիրիմիղին իսմիլլէ շալսէն տրալնըլտըղըմըղը իմա էտիլօր Սէն շալսսէն Քրիստոսը պուլտո՛ւն մը, Քրիստոսըն գանըլէ տչմը օլտուղու փաք փուշարտա կիւնահլարընտան երզգանտըն մը: Նէրէտէսին նէ իլէ օյալանըպ էլլէնի յօսուհն, ճանըլըն իսէլասը կիպի գըյմէթլի շէյի տիւնեանըն ճընճըգ պօնճուղո՛ւ իլէ տէյիշիլօրսընս Ա՛հ, պուկիւն պու սէսի տիւլէ, վէ սէնի տրալան իսէլասքետընտ տէօն:

Միւթ. Կ. Յ. ԹՈՒՄԱԵԱՆ

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԷ

(Բոլոնիոյ մասին)

Այսօր Լեհերը ճակատագրական հոգի մը կը մղեն Գերմաներու դէմ, և բոլոր աշխարհի ուշադրութիւնը դարձած է դէպի այս անիրաւուն ժողովուրդին: Մեր «Կրօնական Լուրեր»-ը բաժինը պիտի սահմանափակենք Լեհաստանի վերաբերեալ կրօնական գիտելութեանց, այդ մասին մեր ընթերցողներուն գաղափար մը տալու համար:

Բոլոնիա կամ Լեհաստան գլխաւորաբար հռոմէական կաթոլիկ երկիր մըն է: 1938ի մարդահամարէն կը հասկցուի որ 32 միլիոն լեհերուն մէջ Աւետ. Բրիստոնեաներ 1 միլիոն կը հաշուեն: Հոն Աւետ. Եկեղեցիներ 7 հառուածներու բաժնուած են, որոնցմէ երկուքը՝ Բոլոնիոյ Աւետ. Օկսպուրկ Եկեղեցին (լուտերական) և Բոլոնիոյ Միաց. Աւետ. Եկեղեցի (քարեկարգեալ): 755 հազար անդամ ունին: Առաջինին մէջ անդամներուն 80 տը հարիւրը, իսկ երկրորդին մէջ գրեթէ ամէնը գերմանական ծագում ունին, և լեզուին գերմաներէն է: Օկսպուրկ Աւետ. եկեղեցւոյն մէջ, սակայն, եկեղ. պաշտօնեաներուն մեծամասնութիւնը բոլոնիացի են: Ըստ երկրին օրէնքին, թէպէտ կաթոլիկները պետութեան մէջ առաջին տեղը կը գրաւեն, բայց բոլոր կրօնքներ հաւասար իրաւունքներ ունին: Սակայն կաթոլիկ ներկայացուցիչներ կը պնդեն թէ հռոմէական կաթոլիկութիւնը անհրաժեշտ տարրն է բոլոր նիական ազգութեան մէջ, առանց որուն պիտի դադրէր կարեւոր պետութիւն մը ըլլալէ: Ասոնք կաթոլիկութիւնն ու հանրապետութիւնը նոյն և մի կը նկատեն: Զգտումը ընդմէջ Գերմանիոյ և Բոլոնիոյ շատ գէշ դրութեան մոտենած էր Աւետարանական եկեղեցիներու վիճակը ներկայ պատերազմէն առաջ, այժմ փճանալու

վտանգին ենթակայ են:

Կառավարութիւնը դաշնակցած է Կաթոլիկ Եկեղեցւոյ իշխանութեանց հետ և կը պայքարի միւս եկեղեցիներուն դէմ ամբաստանելով զանոնք հակազգային ձգտումներով: Լուտերական եկեղեցիին պատկանող, սակայն Լեհահպատակ չեղող քարոզիչներ շատոնց աքսորուած են: Քարոզչին մէկը բանալ կը մնայ կոյս Մարիամը նախատած ըլլալուն համար: Երիցական քարոզիչ մը նոր ելած էր բանտէն, (եթէ մինչեւ հիմա դարձեալ չձեռքաւորուցին): Այս հալածանքը ուղղուած է նաեւ հրեաներու դէմ ալ, անոնց վիճակը գէշ է, յետոյ Օրթոտոք Եկեղեցիներուն դէմ: Ինչպէս ամէն տեղ կառավարութիւնը կը վախճայ իր փոքրամասնութիւններէն, որոնցմէ ութ-րանացիներ 7 միլիոն կը հաշուուին: Այսուամենայնիւ միութարական է տեսնել թէ Լեհաստանի Աւետ. շարժումը բազմութիւններ կը քաշէ, ոչ թէ միայն փասխական ուսերէն և ութրանացիներէն, այլ լեհերէն ալ: Անոնք Աստուծոյ խօսքը լսելու համար յաճախ կը ճամբորդեն 70-100 քիլոմէթր ճամբայ կիրակնօրեայ ժողովներուն համար: Անպառ կորով ունին երգելու՝ հոգեւոր երգեր:

Համագումարներու ներկայ կ'ըլլան խուռն բազմութեամբ, այս ժողովները կը շարունակեն յաճախ մինչեւ գիշերը ուշ տեսն և երբեմն մինչեւ կէս գիշեր: Եթէ կէշ գիշերէն հաքը քարոզիչը յոգնի խօսելէն, կէս ժամ դադարէն հաքը դարձեալ պէտք է սկսի մեկնել Աստուծոյ խօսքը որ իրենց համար թանկագին է՝ ամէն բանէն աւելի:

Եթէ Տէրը կամի յաջորդ թիւով՝ Զեխիոյ, Սլովաքիոյ, Պոնտիոյ և Մորավիոյ Աւետ. Եկեղեցիներու մասին պիտի տանք համառօտ ծանօթութիւններ:

ՅՈՒՇԱՐՁԱՆ ՎԵՐ. Ա. Զ. ԵՂՈՅԵԱՆԻ

Բանքերի յարգելի խմբագիր և մեր բարեկամ Վեր. Յ. Ն. Ղազարոսեանին փափաքին ընդառաջ երթալով, սիրով յանձն կ'առնենք Վեր. Ա. Զ. Եղոյեանի ծանուցումը ընել թերթիս մէջ: Հատ մեզի տրուած տեղեկութեան սոյն յուշարձան կենսագրականին նախնական պատրաստութիւնները արդէն աւարտած են, և քանի մը շաբաթէն կը յանձնուի մամուլին: Որով մեզի այնպէս թուեցաւ որ պահանջուած ձեռագիրները ապահովուած են: Անոնք որ բան մը ունին սոյն գիրքին մէջ գեղեղունելիք, պէտք է փութացնեն զայն Բանքերի խմբագրութեան հասցէին Վեր. Ա. Զ. Եղոյեանին արժանի այս ձեռնարկը իր բոլոր մտքիւ բարեկամներուն յայանած բաղձանքին արդիւնքն է: «Այս բաղձանքը կ'ըսէ Բանքեր, արդարեւ արտայայտուեցաւ Հայ Աւետարանականութեան բոլոր խաւերէն, ու այս իրաւունքով, քանզի Վեր. Ա. Զ. Եղոյեան յայտնապէս մէկ ուղղութեան չէր վերաբերեր: Ինքը մտնուէն համար էր, մտնէն լեւմէն կրնար խօսիլ... մտնէն ալ կը սիրէր, քանզի անոնք մտնէն ալ Քրիստոսէ սիրուած էին:

«Այս յուշարձանը պիտի ըլլայ գիրքի ձեւին տակ և պիտի պարունակէ:—

ա. Վեր. Ա. Զ. Եղոյեանի կենսագրականը:

բ. Անոր անտիպ քարոզները, որոնցմէ բաւական ունինք մեր ձեռքը:

գ. Անոր թղթակցութիւնները, որոնք բացուեցան աշխարհի մտէն կողմը գտնուող հայ հաւատացեալներու հետ, իրեն ուղղուած հարցումներու առթիւ և որոնց նա մեծ խմտատութեամբ պատասխանեց: Դիրքը պիտի

պարունակէ թերեւս 350-400 էջ»:

Յովորութիւն կը մողթենք:

ՄՕՏ ԱՏԵՆԷՆ

Արդէն մամուլի տակ է, և քանի մը օրէն լոյս կը տեսնէ, «Արթնութիւններ և Աղօթքը» անուն գրքոյկը, բաղկացած 80-90 էջերէ:

Գրկոյկիս հեղինակն է Տօթթովմաս Փէյն, որ 30 տարի փորձառութիւն ստացած է արթնութիւններու մէջ: Երբ անգամ մը սկսիս կարդալ, շատ չյուսալացած նիւթը պիտի գրաւէ քեզ: Եւ բոլոր փափաք մը պիտի արթննայ մէջդ, այդ տեղ կենդանի գոյնեթով նկարագրուած կեանքը ունենալու, տեղւոյդ վրայ տեսնելու պատմուած հրաշալի արթնութիւնները, և մանաւանդ անոր ընթերցումը քեզ պիտի մղէր անպայմանօրէն ջերմեւանդ աղօթող մը ըլլալու: Տե՛ս թէ ի՞նչ կը գրեն անոր մասին կրօն. մեծ թերթեր և ակամաւոր քարոզիչներ:

Լայն հեռ Ֆեյթհ.— «Ահա ճիշդ այսպիսի գրականութեամբ է որ արթնութեան մը համար բոլոր փափաք մը պիտի տարածուի և պիտի աճի»:

Մերոսիս Ռեֆրսք.— «Զօրաւոր կերպով կը յանձնարարենք զայն: Հոն կը տեսնենք յայտնուած՝ աւետարանչական յաջողութեան գաղտնիքը»:

Ճ. Ս. Հարրիսք.— «Գ'ըսէ, «Մէկը չկրնար կարդալ զայն առանց զգալու ներքին կրօնի մը այրուիլը իր մէջը»:

Պ. Հիմչլիք.— «Ամբողջ ուժովս կը յանձնարարեմ այն բոլոր քրիստոնեաներուն, որոնք կուզեն ճշմարիտ կրօն. արթնութիւն մը ունենալ, որ կարգաւ Տօթթ. Փէյնին գիրքը Անոր արժէքը անպատմելի է»:

Ա'րդ, ահապարեցէ՛ք ապահովել օրինակ մը: Դիմել՝ խմբագրութեանս: Գին՝ 5 Ե. Դ. Ամերիկա՝ 30 սէնթ: